Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Արդարադատության

պարզեցված բյուջե 2026

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված հապավումներ	4
Ընդհանուր ակնարկ	5
Արդարատության ոլորտի բյուջեն	6
ՀՀ Արդարադատության նախարարության բյուջեն ըստ ծրագրերի	7
Արդարադատության նախարարության և Սահմանադրական դատարանի բյուջեն	8
ԲԴԽ և Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն	9
ՄԻՊ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բյուջեն	10
Քննչական կոմիտեի և ՀՀ դատախազության բյուջեն	11
Արդարադատության ոլորտի արդյունքային ցուցանիշներ	12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԿ	Հասարակության կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2026 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 3,090.9 մլրդ դրամ, ծախսերի գծով 3,627.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով 536.8 մլրդ դրամ կամ համապատասխանաբար ՀՆԱ-ի 25.9, 30.4 և 4.5 տոկոսը:

- Արդարադատության ոլորտում իրականացվող ծախսերը պետական բյուջեում ներկայացված են արդարադատության և դատական գործունեության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Արդարադատության նախարարության և այլ պետական մարմինների կողմից, որոնք են՝ ՀՀ սահմանադրական դատարանը, Բարձրագույն դատական խորհուրդը, ՀՀ դատախազությունը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ քննչական կոմիտեն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

- 2026 թվականին արդարադատության ոլորտին նախատեսվել է հատկացնել 77.4 մլրդ դրամ, ինչը կազմում է պետական բյուջեի ամբողջ ծախսերի 2.1 տոկոսը և ՀՆԱ-ի 0.6 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ արդարադատության ոլորտի ֆինանսավորումն աճել է 2.9 տոկոսով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



- 2021-2026 թվականներին արդարադատության ոլորտի բյուջեն ունեցել է կայուն աճի միտում: Եթե 2021 թվականին ոլորտին ուղղվել է 48.4 մլրդ դրամ, ապա 2026 թվականին այդ ցուցանիշը կհասնի 77.4 մլրդ դրամի՝ աճելով 29.0 մլրդ դրամով կամ շուրջ 59.9 տոկոսով: Առավել զգալի աճ արձանագրվել է 2022-2023 թվականներին, երբ բյուջեի ծավալը 57.8 մլրդ դրամից աճել է մինչև 72.4 մլրդ դրամ:

- 2024 թվականին արդարադատության ոլորտի բյուջեն կազմել է 75.4 մլրդ դրամ, իսկ 2025 թվականին արձանագրվել է աննշան նվազում՝ մինչև 75.2 մլրդ դրամ: Սակայն արդեն 2026 թվականին նախատեսվում է բյուջեի նոր աճ՝ մինչև 77.4 մլրդ դրամ, ինչը վկայում է ոլորտի ֆինանսավորման շարունակական ընդլայնման մասին:

- 2026 թվականին արդարադատության ոլորտի բյուջեն կկազմի 77.4 մլրդ դրամ: Ֆինանսավորման հիմնական մասը կենտրոնացված է Արդարադատության նախարարությունում (32.6%), Քննչական կոմիտեում (24.8%) և Բարձրագույն դատական խորհրդում (21.8%), որոնց համատեղ բաժին է ընկնում ընդհանուր բյուջեի շուրջ 79.2%-ը: Միաժամանակ, Դատախազությանը կհատկացվի 13.7%, իսկ մնացած միջոցները կբաշխվեն Հակակոռուպցիոն կոմիտեի, Սահմանադրական դատարանի, ՄԻՊ աշխատակազմի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև: Այսպիսով, բյուջեի կառուցվածքը արտացոլում է ֆինանսական միջոցների գերակշիռ ուղղվածությունը դեպի արդարադատության համակարգի կառավարման, դատական և քննչական գործառույթների ապահովում:

ՀՀ Արդարադատության նախարարության բյուջեն ըստ ծրագրերի

Ծրագրի դասիչ	Ծրագրի անվանում	2026թ մլրդ դր	Տեսակարար կշիռը. Ոլորտի ընդ. ծախսերի մեջ %
1052	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում	156.4	0.6
1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում ծրագրերի համակարգում խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում	2,569.4	10.2
1093	Դատական և հանրային պաշտպանություն	1,592.6	6.3
1120	Քրեակատարողական ծառայություններ	16,032.1	63.6
1123	Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում	1,242.4	4.9
1149	Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում	427.2	1.7
1182	Հարկադիր կատարման ծառայություններ	3,195.5	12.7
	ԸՆԴԱՄԵՆԸ	25,215.8	100

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



- 2021-2026 թվականներին արդարադատության բյուջեի ծավալները հիմնականում դրսևորել են աճի միտում: 2026 թվականին արդարադատության բյուջեն կկազմի 25.2 մլն դրամ, որը 2021 թվականի մակարդակը կգերազանցի շուրջ 5.6 մլն դրամով կամ մոտ 28.4 տոկոսով: Դիտարկվող ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է 2023 թվականին՝ կազմելով 25.3 մլն դրամ:

- 2024 թվականին նկատվել է որոշակի նվազում, սակայն արդեն 2025 և 2026 թվականներին բյուջեի ծավալները կրկին աճել են: 2021-2026 թվականներին արդարադատության բյուջեի դինամիկան վկայում է ոլորտի ֆինանսավորման ընդլայնման և արդարադատության գործունեության զարգացման մասին: Չնայած առանձին տարիներին արձանագրված տատանումներին, երկարաժամկետ միտումը պահպանել է աճող բնույթ:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



- 2021-2026 թվականների ընթացքում ՀՀ Սահմանադրական դատարանի բյուջետային հատկացումների դինամիկայի վերլուծությունը վկայում է ֆինանսավորման ընդհանուր կայուն աճի մասին: 2021 թվականին կառույցի բյուջեն կազմել է 678.7 մլն դրամ, որից հետո արձանագրվել է հետևողական աճ՝ 2023 թվականին հասնելով 856.1 մլն դրամի: Չնայած 2024 թվականին նկատվել է բյուջետային միջոցների աննշան նվազում, հաջորդ տարիներին աճի միտումը վերականգնվել է:

- Ժամանակահատվածի ավարտին՝ 2026 թվականին, ֆինանսավորումը հասել է իր առավելագույն մակարդակին՝ կազմելով 912.4 մլն դրամ: Այսպիսով, հինգ տարվա ընթացքում Սահմանադրական դատարանի տարեկան բյուջեն աճել է շուրջ 34.4%-ով, ինչը վկայում է բարձրագույն դատական ատյանի գործունեության ապահովման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղղությամբ պետական հատկացումների հետևողական ընդլայնման մասին:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ



- 2021-2026 թվականների համար ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) բյուջետային հատկացումների վերլուծությունը ցույց է տալիս ֆինանսավորման սկզբնական կտրուկ աճի, որին հաջորդել է որոշակի նվազման և կայունացման միտում: 2021 թվականին, կառույցի բյուջեն կազմել է 12.4 մլրդ դրամ, որից հետո արձանագրվել է հետևողական աճ՝ 2024 թվականին հասնելով իր առավելագույն ցուցանիշին՝ 19.2 մլրդ դրամի:

- 2025 թվականից սկսած նկատվում է բյուջետային միջոցների որոշակի կրճատում, և 2026 թվականին հատկացումները կազմել են 16.9 մլրդ դրամ: Հատկանշական է, որ 2026 թվականի բյուջեի ողջ ծավալը (100%-ը) ուղղվել է «ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում» ծրագրի շրջանակներին (Ծրագրի դասիչ՝ 1092): Չնայած վերջին տարիների անկմանը, հինգ տարիների կտրվածքով ԲԴԽ տարեկան ֆինանսավորումն ընդհանուր առմամբ աճել է շուրջ 35.9%-ով:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



- 2022-2026 թվականների համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի բյուջետային հատկացումների վերլուծությունը ցույց է տալիս ֆինանսավորման սկզբնական կտրուկ աճի, որին հաջորդել է որոշակի նվազման և կրկնակի կայունացման միտում: 2025 թվականից սկսած նկատվում է բյուջետային միջոցների որոշակի կրճատում, և 2026 թվականին հատկացումները կազմել են 3.5 մլրդ դրամ:

- Հատկանշական է, որ 2026 թվականի բյուջեի ողջ ծավալը (100%-ը) ուղղվել է «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» ծրագրի շրջանակներին (Ծրագրի դասիչ՝ 1231): Չնայած վերջին տարիների տատանումներին, 2022 թվականի համեմատությամբ կոմիտեի տարեկան ֆինանսավորումն ընդհանուր առմամբ աճել է շուրջ 133.2%-ով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բյուջեն 2021-2026թթ (մլն դրամ)



- 2021–2026 թվականներին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բյուջեն ընդհանուր առմամբ ունեցել է աճի միտում: Եթե 2021 թվականին աշխատակազմին ուղղվել է 531.3 մլն դրամ, ապա 2026 թվականին այդ ցուցանիշը կհասնի 602.1 մլն դրամի՝ աճելով շուրջ 13.3 տոկոսով, ընդ որում՝ ողջ ֆինանսավորումն ամբողջությամբ ուղղվում է «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրին (դասիչ՝ 1180)՝ ապահովելով 100 տոկոս տեսակարար կշիռ:

- Չնայած 2025 թվականին արձանագրվել է հերթական թեթև նվազումը՝ մինչև 578.1 մլն դրամ, արդեն 2026 թվականին նախատեսվում է բյուջեի նոր աճ՝ հասնելով դիտարկվող ժամանակահատվածի առավելագույն ցուցանիշին (602.1 մլն դրամ), ինչը վկայում է ոլորտի ֆինանսական ապահովվածության շարունակական կարևորման մասին:

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բյուջեն 2021-2026թթ (մլն դրամ)



- 2026 թվականին ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բյուջեն նախատեսվում է, որ կկազմի 405.7 մլն դրամ, ինչը վկայում է դիտարկվող ժամանակահատվածում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղվող ֆինանսական միջոցների զգալի աճի մասին: Ֆինանսավորման առավելագույն ծավալը կանխատեսվում էր 2025 թվականին՝ հասնելով 420.3 մլն դրամի, ինչից հետո՝ 2026-ին, նկատվում է աննշան նվազում:

- 2026 թվականի բյուջեի շրջանակներում ֆինանսավորումն ամբողջությամբ կենտրոնացված է «Կանխարգելման համակարգի զարգացման ապահովում» ծրագրում (դասիչ՝ 1181), որը հանդիսանում է հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղությունը: Բյուջեի կառուցվածքն արտացոլում է պետության հստակ ուղղվածությունը դեպի հակակոռուպցիոն կանխարգելիչ մեխանիզմների ամրապնդում ու զարգացում:

Քննչական կոմիտեի բյուջեն 2021-2026թթ (մլրդ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- 2021-2026 թվականներին ՀՀ Քննչական կոմիտեի բյուջեն ցուցաբերել է կայուն աճի միտում: Եթե 2021 թվականին բյուջեն կազմել է 8.1 մլրդ դրամ, ապա 2026 թվականին այն հասել է 19.2 մլրդ դրամի՝ աճելով շուրջ 2.4 անգամ: Առավել բարձր աճ գրանցվել է 2023 թվականին, իսկ հետագա տարիներին աճի տեմպերը աստիճանաբար դանդաղել են: Ընդհանուր առմամբ, բյուջետային հատկացումների աճը վկայում է քննչական համակարգի զարգացմանն ու կարողությունների ամրապնդմանն ուղղված պետական քաղաքականության մասին:

Դատախազության բյուջեն 2021-2026թթ (մլրդ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- 2021-2026 թվականներին ՀՀ դատախազության ոլորտի բյուջեն աճել է 6.1 մլրդ դրամից մինչև 10.6 մլրդ դրամ՝ ավելանալով շուրջ 73.3 տոկոսով: Առավել զգալի աճ արձանագրվել է 2023 թվականին, որից հետո բյուջեի ծավալները պահպանվել են համեմատաբար կայուն մակարդակի վրա: 2026 թվականի բյուջեի կառուցվածքում գերակշռում են դատական համակարգին ուղղվող ծախսերը՝ 94.2 տոկոս մասնաբաժնով, մինչդեռ փորձագիտական ծառայություններին և մասնագիտական ուսուցմանը բաժին է ընկնում համապատասխանաբար 5.7 և 0.1 տոկոսը: Սա վկայում է ոլորտում ֆինանսական ռեսուրսների հիմնական կենտրոնացման մասին՝ ուղղված դատական համակարգի գործունեության ապահովմանը և զարգացմանը:

Արդարադատության ոլորտի 2026 թվականի ակնկալվող արդյունքային ցուցանիշները

Հանրային պաշտպանության ծառայության կողմից վարույթ ընդունված գործերի թիվ	19,600
Սնանկության գործերի քանակ	1,133
Դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց թիվ	2,850
Պրոբացիայի տակ գտնվող շահառուների թիվ	16,533
ՀԿԾ կատարողական վարույթների քանակ	2,967,725
Սահմանադրական դատարան ուղղված դիմումների քանակ	380
Հակակոռուպցիոն կոմիտեում վարույթում քննված քրեական վարույթների ընդհանուր թիվ	2,400
Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվ	2,000
Ընտրական գործընթացների հետ կապված քրեական վարույթների թիվ	50
Հակակոռուպցիոն կոմիտեում դիմումների և բողոքների թիվ	5,000
ՄԻՊ-ին ուղղված դիմում-բողոքների քանակ	12,797
ՄԻՊ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերի քանակ	5,315

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Արդարադատության ոլորտի 2026 թվականի ակնկալվող արդյունքային ցուցանիշները

ԿԿՀ-ի կողմից վարքագծի կանոնների միասնական կիրառմամբ ապահովված հանրային ծառայության տեսակներ	7
ԿԿՀ գործունեության արդյունքում պաշտոնատար անձանց կողմից չներկայացված հայտարարագրերի քանակի նվազում	8%
ԿԿՀ-ի կողմից օրենքով սահմանված հիմքերի առկայության պարագայում հայտարարագրերի վերլուծություններ	200
ՀՀ քննչական կոմիտեում քրեական վարույթների քանակ	240,000
Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության, շահերի բախման և վարքագծի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ ԿԿՀ-ի ուսումնասիրությունների քանակ	120
ՀՀ քննչական կոմիտեում քննիչների միջին ծանրաբեռնվածություն թիվ	370
ՀՀ դատախազությունում նախաձեռնված քրեական վարույթների ընդհանուր թիվ	65,000
Դատախազական հսկողության ներքո գտնված քրեական վարույթների ընդհանուր թիվ	223,000
ՀՀ դատախազությունում ավարտված քրեական վարույթների թիվ	45,000
ՀՀ դատախազության կողմից իրականացված գործառույթների արդյունքում պետությանը և համայնքներին պատճառված՝ վերականգնված վնասի չափը (հազար դրամ)	2,000,000
ՀՀ դատախազությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակներում ներկայացված հայցագնի ընդհանուր գումարը (հազար դրամ)	598,458,599

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԴԱՏԱՐԱՆՆԵՐ	Ստացված հայցադիմումների, դիմումների և գործերի քանակը	Վարույթ ընդունված գործերի քանակը	Ավարտված գործերի քանակ
ՀՀ Վճռաբեկ դատարան	7,649	-	-
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	10,166	8,111	7,246
ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	10,964	9,265	8,408
ՀՀ վերաքննիչ վարչական դատարան	15,511	13,817	6,026
ՀՀ վարչական դատարան	41,691	38,186	23,531
ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	8,300	7,962	6,957
ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	11,457	11,014	8,977
ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	9,629	9,107	6,929
ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	4,028	3,853	3,497
ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	7,822	7,478	6,202
ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	8,326	7,917	6,816
ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	9,441	9,013	7,378
ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	5,367	5,239	4,746
ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	4,093	3,842	3,395
ՀՀ Սնանկության դատարան	15,264	13,099	6,813
Հակակոռուպցիոն դատարան	4,367	3,884	3,445
Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան	1,909	1,425	1,314
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան	31,695	29,063	24,846
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան	29,551	28,060	25,514

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ . ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ - 2026

B4C Budgets for Citizens

Բյուջեներ քաղաքացիների համար

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր

budgets.am